Հավելված
ՀՀ վարչապետի N 277- Ա
որոշման

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՒՅՍ ՀԱՅԻ ԱՉՔԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Նվազեցնել ձեռք բերովի կուրությունը բնակչության շրջանում, հասանելի և մատչելի դարձնել ակնաբուժական ծառայությունները և բուժօգնությունը, աջակցել սոցիալապես անապահով և խոցելի բնակչությանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	1) ԱՄՆ-ում գտնվող «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական ընկերություն (The Armenian Eye Care Project Corporation, 100 Foothill Blvd. Ste. 203, San Dimas CA. 91773), որը հանդիսանում է «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հիմնադիրը. 2) Շաքարախտի համաշխարհային հիմնադրամ (WDF, Դանիա, World Diabetes Foundation , Krogshøjvej 30A, Bldg. 8Y, DK-2880 Bagsværd):
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ (իրավաբանական հասցե՝ Վրացական 9, բն. 44, գործունեության հասցե՝ Ս. Մերգելյան 7-րդ տուն հեռախոս՝ 55 90 68; 57 76 11, ՀՎՀՀ՝ 00074765):

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և քաղաք Երևան, բնագավառը՝ առողջապահական:
6.	Ծրագրի բյուջեն	761,204,824 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1) Հայաստանի Հանրապետության մարզերի և քաղաք Երևանի բնակչությունը՝ սոցիալապես անապահով ընտանիքները (ըստ ընտանեկան նպաստների համակարգի սահմանային մեծությունից սկսած (25 միավոր)), երեխաները, թոշակառուները, հաշմանդամները, Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչությունը, զոհված ազատամարտիկների ընտանիքները, 44-օրյա պատերազմի մասնակիցների ընտանիքները, շաքարախտով հիվանդները, անհաս նորածին երեխաները, որոնց սպառնում է անհասության ռետինոպաթիայի պատճառով առաջացած կուրության վտանգը. 2) ընդհանուր ակնային հետազոտությունների դեպքում – ստուգվում են բոլոր նրանք, ովքեր որոշում են գալ անվճար ստուգման: Վիրահատության ենթակա անձանց պետպատվերից օգտվելու իրավասությունը ստուգվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած ընտանեկան անապահովության ցուցակների միջոցով՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) ակնային հիվանդությունների կանխարգելում, հետազոտություն, բուժում, վիրահատություններ, շաքարախտ ունեցողների խորացված ակնային ստուգումներ նորարարական միջոցներով և լազերային բուժում Աչքի շարժական հիվանդանոցի և «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի Հայաստանի Հանրապետության Տավուշի, Լոռու, Սյունիքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերում հիմնված ակնաբուժական կենտրոնների արդյունավետ աշխատանքի միջոցով, դպրոցականների սքրինինգ և բուժում, ակնոցների տրամադրում, անհասության ռետինոպաթիա կանխարգելում և բուժում: Միջոցառումները իրականացվելու են 2025

		թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում և արժեքը կկազմի՝ 456,929,824 դրամ. 2) Առողջապահության նախարարության առաջարկով ընտրված Հայաստանի Հանրապետության մարզերի՝ Արարատի, Կոտայքի և Գեղարքունիքի պոլիկլինիկաների ակնաբուժական կաբինետների վերազինում և սարքավորումներով ապահովում: Միջոցառումները իրականացվելու են 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում և արժեքը կկազմի՝ 183,000,000 դրամ. 3) առողջապահության բնագավառում ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով՝ մասնագիտական առկա և առցանց վերապատրաստումների, առաջնային և երկրորդային մակարդակներում դասընթացների, միջազգային սեմինարների, գիտաժողով-ների կազմակերպում: Միջոցառումները իրականացվելու են 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում և արժեքը կկազմի 55,195,000 դրամ. 4) բնակչության շրջանում ակնային հիվանդությունների և շաքարախտի կանխարգելիչ միջոցառումների, բարդությունների կանխարգելման ու բուժման անհրաժեշտության մասին տեղեկատվության պատրաստում և տարածում, իրազեկու-թյան բարձրացում: Հանրային իրազեկմանը ուղղված նյութերի, մանկական ձեռնարկների, դիաբետի վարման ուսումնական նյութերի տպագրում, ուսուցողական տեսանյութերի պատրաստում և դասընթացների անցկացում բնակչության տարբեր խմբերի համար: Միջոցառումները իրականացվելու են 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում և արժեքը կկազմի՝ 20,000,000 դրամ. 5) ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերի արժեքը կկազմի՝ 46,080,000 դրամ և նախատեսված են 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ի ժամանակահատվածի համար:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) ծրագրի իրականացմանն ուղղված ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքներ և ծառայություններ՝ ա. ակնաբուժական և բժշկական սարքավորումների, դեղորայքի ներմուծում՝ 550,000,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից և մաքսատուրքից ազատում),

		բ. ակնաբուժական ու բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում՝ 12,000,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), գ. վառելիքի ձեռքբերում (Աչքի շարժական հիվանդանոցի և գրասենյակի մեքենայի համար՝ Հայաստանի Հանրապետության մարզեր այցելելու նպատակով)՝ 15,000,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), դ. ինտերնետային ծառայությունների ձեռքբերում (Աչքի շարժական հիվանդանոցի, ուսումնական կենտրոնի, առցանց գիտաժողովների և սեմինարների, ռետինալ խցիկների, հեռաբժշկության և հեռաուսուցման օգնությամբ անցկացվող վիրահատությունների, բժիշկների առցանց ուսուցման համար)՝ 12,870,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), ե. վիրտուալ սերվերների (IR Cloud) ապահովման հետ կապված ծառայությունների ձեռքբերում (ընդհանուր սքրինինգի, դպրոցական սքրինինգի և անհասության ռետինոպաթիայի ծրագրերի և բազաների համար)՝ 724,824 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), զ. մեկ մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում կամ ներմուծում (մարզային այցերի համար)՝ 25,000,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից և մաքսատուրքից ազատում), է. հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում (միջազգային գիտաժողովների հետ կապված դահլիճի և սարքավորումների վարձակալություն, սնունդ)՝ 16,000,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), ը. ակնային ուսումնական և տեղեկատվական նյութերի ներմուծում (ԱՄՆ-ից, Եվրոպայից)՝ 36,000,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից և մաքսատուրքից ազատում), թ. տեղեկատվական և հանրակրթական նյութերի տպագրում (բրոշյուրներ, պաստառներ, ձեռնարկներ)՝ 11,000,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), ժ. այլ ծախսեր (մարդկային ռեսուրսների, կացարանի և սննդի ապահովման հետ կապված ծառայությունների ու ապրանքների ձեռքբերումներ)՝ 36,530,000 դրամ (չի ակնկալվում ավելացված արժեքի հարկից ազատում):

		2) ծրագրի կազմակերպական ծախսերի շրջանակներում ծառայությունների ձեռքբերում՝ ա. ինտերնետային ծառայությունների ձեռքբերում (կաբելային կապի ապահովում և տեխնիկական սպասարկում)՝ 720,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), բ. համակարգչային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 1, 080,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), գ. հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում (քաղաքային գծեր և բջջային կապ)՝ 5,000,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), դ. ջրամատակարարման ծառայությունների ձեռքբերում (ջրամատակարարում և խմելու ջրի ձեռքբերում)՝ 720,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), ե. գազամատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 4,500,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), զ. էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 2,500,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), է. հաշվապահական ծառայությունների ձեռքբերում՝ 15,660,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), ը. աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 3,900,000 դրամ (ակնկալվում է ավելացված արժեքի հարկից ազատում), թ. այլ ծախսեր (մարդկային ռեսուրսներ, գրասենյակի վարձակալություն և այլն)՝ 12,000,000 դրամ (չի ակնկալվում ավելացված արժեքի հարկից ազատում):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) ինտերնետային ծառայությունների ձեռքբերում (կաբելային կապի ապահովում և տեխնիկական սպասարկում)՝ 720,000 դրամ. 2) համակարգչային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 1, 080,000 դրամ. 3) հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում (քաղաքային գծեր և բջջային կապ)՝ 5,000,000 դրամ.

		4) ջրամատակարարման ծառայությունների ձեռքբերում (ջրամատակարարում և խմելու ջրի ձեռքբերում)՝ 720,000 դրամ. 5) գազամատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 4,500,000 դրամ. 6) էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 2,500,000 դրամ. 7) հաշվապահական ծառայությունների ձեռքբերում՝ 15,660,000 դրամ. 8) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 3,900,000 դրամ. 9) այլ ծախսեր (մարդկային ռեսուրսներ, գրասենյակի վարձակալություն և այլն)՝ 12,000,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	1) Առողջապահության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի, նախարարություն, Տեղական ինքնակառավարման մարմիններ, Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ, միջազգային և հասարակական կազմակերպություններ. 2) Առողջապահության նախարարությունը համակարգում է ծրագիրը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տրամադրում է անապահով ընտանիքների ցուցակները: Աշխատանքները սկսելուց առաջ և ընթացքում, «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի հետ՝ բնակչությանը ծրագրի առաքելությանը իրազեկելու, ժամանակացույցը կազմելու, շահառուների ցուցակները վերստուգելու, տվյալներ և տեղեկատվություն փոխանակելու նպատակով:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (ԱՄՆ), անհատ բարերարների, Առողջապահության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից. 2) շաբաթական հաշվետվություններ ներկայացվում են էլեկտրոնային փոստով հիմնադիր բարերարին: Մարզերում ծրագիրը ավարտելուց հետո հաշվետվություններ են ներկայացվում Առողջապահության նախարարությանը և համապատասխան Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերին և այլ գործընկերներին. 3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

06.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ